



Հակոբ Պարոնյան

Ազգային շոշեր

ՄԿՐՏԻՉ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Մուրբ Գիրքէն գիտենք, որ Փարաւոն երբ Աստուծոյ առաջարկութիւնը մերժեց. Աստուած սկսաւ եգիպտացիներուն իրարու ետեւէ պատիժներ դրկել, որոնց թիւը տասնի յանգեցաւ, Փարաւոն մինչեւ իններորդ պատիժը յամառութեամբ դէմ կեցաւ. եւ տասներորդին առջեւ ալ կը վարանէր հնազանդութիւն յայտնել՝ երբ Մովսէս եւ Ահարոն իրեն յայտնեցին թէ՛ եթէ նորէն յամառիս՝ իբրեւ մետասաներորդ պատիժ Մկրտիչ Տիգրանեանը պիտի դրկէ Աստուած: Փարաւոն այս յայտնութենէն սուկալով՝ Մովսէսն եւ Ահարոնը անմիջապէս կանչել տուաւ, արտօնեց գիրենք որ ելնեն երթան, իրենց ունեցածն ալ մէկտեղ տանելով: Փարաւոնին հնազանդութեանը վրայ Աստուած ստիպուեցաւ քովը պահել Տիգրանեանը: 1815 թուականին երբ տեսաւ Աստուած, որ մեր կրած տառապանքներէն չխրատուելով՝ անարժաններէն վարդապետ, քահանայ կը ձեռնադրենք եւ ազգին իրաւունքներն անոնց ձեռքն կը յանձնենք, բարկացաւ եւ Մկրտիչ Տիգրանեանը, պատիժներուն նախագահը, դրկեց որ խրատուինք, թէպէտեւ մենք այս պատիժն ալ առ ոչինչ գրելով շարունակեցինք եւ կը շարունակենք մեր ընթացքը:

Մկրտիչ եպիսկոպոսին աշխարհ գալուն բուն պատճառն մեր ընթերցողներուն յայտնելէ ետքը, պարտք կը սեպենք անոր քանի մը մականուններն ալ հոս յիշել, որպէս զի ուրիշ Մկրտիչներու հետ չշփոթեն իւր անունը:

Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանեան պոլսեցիներէն կ'անուանուի հրաշագործ. Հայաստանի մէջ քիւրտերէն կը յորջորջուի շամնաս հուլուպ, որ կը թարգմանուի ապուրի վարդապետ, լուսահոգի Յակոբ պատրիարքէն կը կոչուէր եօթն փորձանք, գորս արդի վեհափառ Գեորգ կաթողիկոսն մեր ազգին համար բաւական չհամարելով՝ փորձանք մ'ալ ինք աւելցուց եպիսկոպոսութեան աստիճան տալով անոր:

Արդ, Մկրտիչ եպիսկոպոսը ծնած է Տիգրանակերտ, 1815 թուականին:

Ի ծնէ վառվռուն եւ բարեկարգութեան սիրահար գոլով՝ վայրկեան մը հանգիստ չէր մնար: Շաբաթն երեք անգամ տունը կը լուար, կը մաքրէր, կ'աւլէր, պատին վրայ բեւեռ մը գամելու համար տանը հիմերուն բեւեռները կը քակէր բարեկարգելու համար տունն, որ վանքերէն աւելի հաստատ հիման վրայ շինուած ըլլալուն պատճառաւ չէր կործանուէր: Մայրն գաւակին ըրած բարեկարգութիւններէն ձանձրանալով՝ բռնեց զինքը Կոնոնոսի վանքը դրկեց:

1827-ին կը մտնէ Կոնոնոսի վանքը: Բաւական տարիներ հոն կերակրուելէն ետեւ, ձեռք կը զարնէ վանքը բարեկարգելու, իսկ երբ կը տեսնէ, որ մէկ կողմէն վանքը յօժարութիւն ցոյց չտար բարեկարգուելու, եւ միւս կողմէն վանահայրն յարգը չճանաչեր իւր ծառայութիւններուն՝ որովք վանքն օրըստօրէ ետ ետ կ'երթար, կը թողու այս ազարակն անհիծելով մարդերու ապերախտութիւնը: Չվհասիր սակայն, միտքը կը դնէ վանք մը փնտռել, ինչպէս որ ամէն մարդ գործ մը կը փնտռէ ոչ այդ գործով ապրելու, այլ այդ գործը բարեկարգելու համար:

1837-ին Մշոյ ս. Կարապետի վանքը կ'երթայ: 1839-ին վարդապետ կը ձեռնադրուի եւ իւր ապաշխարանքը կը քաշէ Կաղ Գրողին օճախին մէջ: Աւանդութիւն մը կայ թէ սատանան տարին քանի մը անգամ այդ օճախը կու գայ եւ անոր մոխիրը կը խառնէ եւ թէ այս է պատճառ, որ յիշեալ վանքին մէջ խռովութիւնն միշտ անպակաս է: Ուրիշ ավանդութեան մը նայելով՝ Մկրտիչ եպիսկոպոս այդ օճախին մէջ ապաշխարանք քաշած ժամանակն երբ սատանան կու գայ մոխիրը խառնելու՝ ապաշխարողէն վախնալով կը փախչի, եւ Մկրտիչ եպիսկոպոս կը սկսի այս մոխիրը խառնելու:

1841-ին ձանձրանալով վանքին մէջ անգործ մնալէ, ճամբայ կ'ելնէ Քիրտաստանի բարեկարգութեան համար, ինչպէս կը գրէ ինք իւր Հայելի գործոցին մէջ, հայելի մը, որ դժբախտաբար շատ լաւ կը ցուցնէ անոր պատկերը: Քիրտաստանի բարեկարգութեան խնդիրն, ինչպէս յայտնի կը տեսնուի, Տիգրանեանի օրով ծնած է: Հայաստանի վանքերուն եւ Քիրտաստանի բարեկարգութեան վրայ տասներեք յօդուածներէ բաղկացեալ կանոնագիր մը կը խմբագրէ, եւ երբ անոնց գործադրութեանը պիտի ձեռնարկէր, իւր դէմը կը տեսնէ Դոն Քիշոտի օդային ախոյեանները, որոնց դէմ թէպէտեւ քաջութեամբ կը կռուի, բայց յաղթուելով ետ կը դառնայ:

Այս պարտութիւնն զինք սուրբ Յովհաննէսի վանքը կը նետէ: Եւ որովհետեւ առանց պարտքի վանք չըլլար, այս վանքն ալ ունէր իրեն պարտքերն՝ որոնց վճարման համար վանահայրէն կ'աղաչուի Մկրտիչ եպիսկոպոս՝ երթալ Պաղդադ ու Պարսկաստան հանգանակութիւն ընել: Տիգրանեան ո՛չ միայն Պաղդադ ու Պարսկաստան կ'երթայ, այլ Կիլիկիոյ կողմերն ալ երթալով ցամաքէն Պոլիս կու գայ 1844-ին՝ միշտ հանգանակելով:

Հանգանակութիւնը գոհ չընէր նորին գերապատուութիւնը, որ կը փափաքի Քիրտաստանի Հայաստանի շհասկնաք տղաներ դաստիարակել, Պատրիարքէն կոնդակ մը կ'առնէ, ուրիշէ մ'ալ ուրջ հազար դահեկանի արժողութեամբ դասագիրք նուէր առնելէն ետքը յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ կը սկսի նորէն հանգանակութեան Նիկոմիդիայէն ցամաքէն մինչեւ Տիգրանակերտ, ուր կը հասնի 1845-ին: Ինք ալ իբրեւ Քիրտաստանի տղայ, դաստիարակութեան պէտք ունենալով, բնական էր, որ անբաժ չմնար հանգանակած գումարէն: Իւր խոստովանութեանը նայելով՝ ամբողջ Քիրտաստանի մէջ վարժարաններ կը շինէ... օդի մէջ: Միլուանայ մէջ կը փափաքի վարժարան մը հաստատել... գետնի վրայ. բայց այս գործը քիչ մը դժուար ըլլալով փափաքն չկրնար իրականացնել, մանաւանդ թէ Միլուանաբնակ ազգայիններն հայերէն չէին գիտեր, անխնամ, անհովիւ եւ ան տէր ունչ մնացած էին: Այս ժողովրդեան համար հասարակօրէն կ'ըսեն եղեր.

Պաղ ջուրը կու գայ մեծ Միլիւանա
Գէշ քրթու տղան է սեւ սատանայ.

Ա՛ն բուրդ բամբակը շուտով մկրտէ:

Կ՛ուզէ հայ մնայ, կ՛ուզէ թրքանայ:

Այնպիսի գեղի մը մէջ, որուն վրայ ասանկ ոտանատր մը կը գրուցուի, վարժարան բանալը յայտնի է թէ որչափ դժուար գործ մ'է, լաւ չենք յիշեր Սղերդի՞ մէջ թէ երագին մէջ ալ վարժարան մը կը բանայ. սակայն լաւ կը յիշենք, որ Սղերդի մէջ են եգիդի աղանդատորներն, որոնք սատանային գէշ չեն ըսեր եղեր:

Դիտողութեան արժանի է, որ յիշեալ աղանդատորները Մկրտիչ եպիսկոպոսին վրայօք ալ գովեստով կը խօսին:

Սակայն մարդը հանգիստ չեն թողուր, որ ամէն բան կարգադրէ: Մշոյ եւ Տիգրանակերտի առաջնորդներէն առնուած տեղեկութիւններուն վրայ Պատրիարքարանէն հրաման կ'երթայ, որ կոնդակն Մկրտիչ եպիսկոպոսին ձեռքէն առնուի եւ ինքն ալ վանքի մէջ բանտարկուի: Մկրտիչ եպիսկոպոս կ'իմանայ այս լուրն, եւ փոխանակ ձերբակալուելով վանք տարուելու, յօժար կամքովը անձնատուր ըլլալու համար ճամբայ կ'ելնէ, սակայն ճամբան մոլորելով Մշոյ վանքը երթալու տեղ Կ. Պոլիս կու գայ երկրորդ անգամ 1845-ին: Ս. պատրիարքին կը ներկայանայ եւ կը հարցնէ թէ ի՞նչ են իր յանցանքները: Պատրիարքն՝ որ գիտէր թէ իր հարցման պատասխանելը անօգուտ էր, դուրս հանել կու տայ զինքը: Ամիրաներն, որ շատ անգամ գործերն անուշութեամբ կարգադրելու սկզբունքին կը հետեւէին, Քիւրտաստանի վեց վանքերու անկախ առաջնորդ կ'անուանեն Տիգրանեանն, որ կոնդակն առնելուն պէս ճամբու պատրաստութեան կը սկսի:

1846-ին ճամբայ կ'ելնէ... դժբախտութիւնն ալ ետեւէն: Խնուզ Այրոզ գիւղն իջած էր, ուսկից Մուշ պիտի երթար, եւ ահա քանի մը անձեր կը ձերբակալեն զինքը, գրպարտելով թէ մախաղին մէջը բողոքականի գիրքեր գտած են, եւ գանակոծելով կը բանտարկեն Աւագի Ովէի ախտին մէջը: Քսան օրէն ետքը ախտէն կը հանեն եւ երբ Ս. Կարապետի վանքին մէջ բանտարկուելու համար ճամբայ կը հանեն, բարեկամ քիւրտերն կ'ազատեն զինքն ու կը յանձնեն կառավարութեան, որ Կարին կը դրկէ գայն՝ հոն դատուելու համար: Ինքը կը փափաքի Ս. Յովհաննու վանքն պատուել իր ներկայութեամբը, իսկ երբ կը լսէ, որ կապանքով Ս. Կարապետի վանքին մէջ պիտի պատուասիրուի, կը փախչի.

բայց կը ձերբակալուի, Մուշ կը բերուի, Մուշէն Ս. Կարապետ կը դրկուի, ուր կը բանտարկուի ութսուն օր: Իւր բանտարկութեան այս շրջանին մէջ կը թարգմանէ Աւետարանն քրտերէնի. որպէսզի քրտերէն գիտցող ազգայիններն ալ հասկնան Աւետարանի հոգին եւ իրեն օրինակին շինուին: Բարեկամները կ'երթան եւ կը յաջողին այս հալածեալ առաքեալն բանտէն հանելու:

1847-ին երրորդ անգամ Պուլիս կու գայ: Մայրաքաղաք հասնելուն պէս պատրիարքարանն իրեն պատիւ ընելու նպատակով, երկու մարդ կը դրկէ, որոնք կ'ընկերանան նորին գերապատուութեան մինչեւ Փրկիչ, ուր կը բանտարկուի տասնըհինգ օր եւ ուր խեղճին մախաղէն կը գողցուի հագար եօթը հարիւր դահեկան գոր չունէր:

Սակայն գործող մարդ մը բանտին մէջ չկրնար երկար ատեն մնալ. ուստի այս անգամ ալ բանտէն ազատուելու համար կ'առաջարկէ որ Հայաստան դառնայ եւ Մարաբաս Կատինա Հայոց պատմութիւնը գտնէ: Ամիրային մէկն այս առաջարկութիւնն ընդունելով դրամ կու տայ իրեն, որ երթայ գտնէ այս Ազգային Պատմութիւնը գոր՝ թէպէտեւ գտած կը համարի Տիգրանեան դրամը գրպանը նետելուն պէս, սակայն նորէն ճամբայ կ'ելնէ:

1852-ին իւր ըրած ազգօգուտ գործերուն համար նորէն Պուլիս գալու համար հրաւեր կ'ընդունի, որուն վրայ կ'ելնէ չորրորդ անգամ Պուլիս կու գայ, բայց նորէն օձիքը կ'ազատի եւ վարպետութեամբն ինքզինքն Եօզղատի առաջնորդ ընտրել կու տայ: Հագիւ թէ իւր պաշտօնատեղին կ'երթայ, պսակի խնդիր մը կը յարուցանէ հոն եւ հինգերորդ անգամ Պուլիս կը բերուի: Այս անգամ քիչ մը խիստ կը վարուի. ազգային վարչութեան դէմ բողոքող աղերսագիր մը կու տայ Կայսեր: Կատավարութենէն հրաման կ'երթայ պատրիարքարան, որ սրբազան պատրիարքը Բ. Դուռն երթայ եւ Տիգրանեանի հետ դատուի: Ամիրաները գործին կը միջամտեն եւ մեծ նեղութեամբ կը յաջողին ազգին իրաւունքները պաշտպանել Տիգրանեանի դէմ, որ ազգին իրաւունքներն պաշտպանելու նպատակով դատ բացած էր ազգին պատրիարքին դէմ: Պատրիարքարանն այն ատեն կը համոզուի, որ անկարելի է այս փորձանքին հետ վարուիլը: Քիւրտաստան կը դրկեն զայն. բայց հոն ալ նորէն մոխիր խառնելով կը ստիպէ պատրիարքարանն, որ զինքը Պուլիս բերել տայ. ուստի 1858-ին վեցերորդ անգամ մայրաքաղաք կը

մտնէ:

Այս թուականին Սամաթիոյ Ենի Մահալէի քարոզիչ կը կարգուի. բայց քարոզչութեամբ չկրնալով ապրիլ, կը սկսի հրաշագործութեան: Կաղեր, կոյրեր, խուլեր, համրեր, այսահարներ, անդամաւործներ կը բժշկէր: Ամէն օր հիւանդներ կ'երթային իրեն:

Հայր սուրբ, իմացանք որ դուք ամէն ցաւերը կը փարատէք:

Հրամներ էք, օրհնած:

Քանի մը շաբաթ է ի վեր գլխու ցաւ ունիմ, կ'ուզեմ որ փարատէք:

Գլո՞ւխդ թէ ցաւդ:

Գլուխս, հայր սուրբ, գլուխս:

Շատ լաւ, ինձի համար երկուքն ալ միեւնոյն բանն են: Եկուր խաչահանգիստ մը ընեն:

Մարդը կը մեկնի եւ քանի մը ժամէն ետքը անդիի աշխարհը կ'երթայ:

Երկրորդ մը կը ներկայանայ.

Հա՛յր սուրբ, սենեակին պատուհանը կոտրեցաւ:

Պատուհանը հոս բեր, վրան բժշկութեան ատետարան մը կարդամ:

Երրորդ մը.

Հա՛յր սուրբ, մազերս կը թափուին:

Այս ջուրով գլուխդ լուա՛:

Չորրորդ մը կը մտնէ.

Հայր սուրբ, անձրեւ եկած օրը սենեակս կը վազէ, ի՞նչ ընեն:

Այս ջուրէն քիչ մը դի՛ր սենեակիդ վրայ:

Պատրիարքարանէն մէկը.

Հա՛յր սուրբ...

Այս ջուրէն ա՛ն:

Պատրիարքը դրկեց գիս...

Պատրիարքին ալ այս ջուրէն:

Ձեզի ըսելու որ...

Ձեզի ալ այս ջուրէն:

Քիչ մը...

Այս ջուրէն:

Պատրիարքարան հրամանէք:

Պատրիարքարանի ալ այս ջուրէն:

Եթէ չի գաք...

Եթէին ալ այս ջուրէն:

Նորէն բանտ պիտի երթաք:

Բանտին ալ այս ջուրէն:

Եթէ ընդդիմանաք՝ ոստիկանութեան ձեռքով...

Ոստիկանութեան ալ այս ջուրէն:

Պիտի բերուիք Փրկիչ:

Փրկիչին այ այս ջուրէն:

Կառավարութիւնը...

Կառավարութեան այ այս ջուրէն:

Վերջապէս ամէն ցաւերն այս ջուրով կը բժշկէր: Միայն այսահարներուն փորէն դեւերը կը հանէր, սակայն չկրնալով միշտ խոզեր գտնել, որ անոնց դրկէ, շատ անգամ իւր փորին մէջ կը հիւրընկալէր դեւերը առժամանակեայ կերպով:

Պատրիարքարանն թէպէտեւ կ'աշխատէր անոր արգելույ տուներու մէջ մտնելն, բայց այն ատեն ամէն տուն հետաքրքրութեան համար հիւանդ գտնուելով, չէր կրնար առաջքն առնել:

Մէկ կողմէն հրաշք կը գործէր, միւս կողմէն միշտ հանգանակութիւն կ'ընէր: Ազգային եւ քրտերէն գրականութիւնը կը ծաղկեցնէր: Քրտերէն Քերական, Լապտեր, Լուսատու եւ Ընթերցարան տպել կու տար եւ տպագրութեան ծախքը ժողովրդէն կ'առնէր: Երբեմն տպարանին չէր վճարեր ծախքը, երբ տպարանապետն երթար ոտք կոխէր եւ ստակ ուզէր այս ջուրէն ըսելով անոր այ ջուր կու տար:

Բաւական ժամանակ հրաշագործութեամբ ապրելէն ետքը 1861-ին Բալուի առաջնորդութիւնն կը ստանձնէ: Պաշտօնատեղին երթալէն քանի մը ամիս ետքը իւր փոքրատորը ճամբայ կը դրուի Պոլիս գալու համար, եւ զարմանալի գուգադիպութեամբ մը փոքրատորին կինն այ նոյն օրը Պոլիսէն կը մեկնի Բալու երթալու համար: Լրագիրներու մէջ գոռում գոչումը կը սկսի: Տիգրանեանը կը գգայ որ նորէն մոխիր խառնած է, գիրք ցրուելու համար Բալուէն... կը փախչի: Բ. Դոնէն հրաման կը տրուի Բալուի կառավարութեան, որ Տիգրանեանը Պոլիս դրկէ: Կը լսէ այս լուրը, Կարին կը փախչի, Կարինէն Էջմիածին, ուր կաթողիկոսն զինքը շընդուներ եւ կը ստիպուի վեցերորդ անգամ Պոլիս դառնալ 1863-ին: Յանձնաժողով մը կը կազմուի, որ իւր յանցանքները քննելով տեղեկագիր մը պատրաստէ: Յանձնաժողովը նկատելով, որ տեղեկագիրն տասը հատորի բարձրացաւ եւ յանցանքներուն վերջը գալիք չունի՝ հրաժարեցաւ պաշտօնէն:

1866-ին Հալեպի առաջնորդ անուանուելով Ջէթուն կը դրկուի՝ հոն ծագած խռովութիւնները հանդարտեցնելու համար: Ջէթուն մտնելէն երկու ամիս ետքը հինգ տղայ կ'առնէ հոնկից եւ անոնց դաստիարակութեանը համար կը սկսի ժողովրդէն դրամ հաւաքել: Յիշեալ հինգ տղաները առջելը ձգած Եգիպտոս կ'երթայ, հոն ալ բաւական հանգանակութիւն ընելէն ետքը Իզմիր կու գայ, Իզմիրէն Պոլիս միշտ հանգանակելով շոգենաւի մէջ ալ: Պոլիս Ալի փաշային կը ներկայացնէ տղաները, որոնց երգ մը երգել կու տայ եւ յիսուն ոսկոյ գումար մ'աւ նորին բարձրութենէն ընդունելով, տղաներն իբրեւ աղքատ ձրիաբար Փրկիչ կը դնէ, եւ Հալեպի ժողովուրդը հոգետրապէս մխիթարելու համար նորէն ճամբայ կ'ելնէ դրամ հաւաքելու:

1868-ին եպիսկոպոսանալու համար հանրագրութիւններ պատրաստել կու տայ եւ Էջմիածին կը մեկնի, ուր եպիսկոպոսութեան աստիճան կ'ընդունի:

Բարձեալ Պոլիս կը դառնայ եւ Ջէթունի խնդիրը կարգադրելու համար պարտք ըրած կարծելով՝ ստակ ժողովելու համար կոնդակ մը կ'առնէ եւ Ռումանիա կ'ուղեորի: Բաւական գումար մը կը հաւաքէ, սակայն երբ Պոլիս կու գայ եւ համար կը պահանջուի իրմէն՝ հաշուոյ տետրակները Պատրիարքարանի մէջ հրաշքով կը կորսուին եւ ինքն ալ ազատ կը մնայ հաշի տալէ:

1872-ին Տիգրանակերտ կը քաշուի քիչ մը հանգստանալու համար, բայց որովհետեւ երկար ատեն չի կարող հանգիստ նստիլ, Մշոյ դաշտը կ'ելնէ եւ որչափ կոյր, կաղ, խուլ, համր մարդեր որ կը տեսնէ, ամէնն ալ քահանայ կը ձեռնադրէ ի փառս Հայաստանեայց եկեղեցոյ: Այս ձեռնադրութիւններուն պատճառը հարցուելով կը պատասխանէ թէ՛ այս խեղճերն արդէն քառասուն օրէ ի վեր բան մը կերած չըլլալով՝ իրենց ապաշխարանքն քաշած էին եւ հետեւապէս իրաւունք ստացած էին քահանայ ձեռնադրուելու:

Պատրիարքարանը կը սպառնայ. Տիգրանեան կը ծիծաղի, բայց վերջապէս օր մը կը ձերբակալուի ծառի մը տակ եզ մը քահանայ ձեռնադրած ժամանակը: Սակայն անմիջապէս թողով նորընծայ եզն, որուն փիլոն ալ տուած էր, կ'աներեւութանայ... անտառներուն մէջ: Երբ Ներսէս արքեպիսկոպոս պատրիարքական գահուն վրայ կը բարձրանայ՝ կը գրէ վեհափառ կաթողիկոսին, որ շնորհ ընէ եւ հրաշագործն իւր իշխանութեանը տակ առնէ:

Վեհափառ կաթողիկոսն՝ որուն ատելի արժանի էր եօթն փորձանքն ՝ չուզեր գայն իր քովն պահել՝ յայտնելով թէ ինք արդէն բաւական ունի անոնցմէ: Տիգրանեան տեսնելով, որ ազգն դժուարութիւն կը յարուցանէ իր վրայ փորձանք հրաւիրելու մասին՝ առանց հրաւերի կ'ելլէ դարձեալ Կ. Պոլիս կու գայ, ուր կը գտնուի այժմ Սամաթիոյ սուրբ Կարապետ եկեղեցին քարոզչութեան պաշտօնով:

Այս է ահա հրաշագործին կեանքը՝ որուն մէկ քառորդն անցած է ճամբորդութեան մէջ, մէկ քառորդը բանտերու մէջ, մէկ քառորդը մոխիր խառնելու մէջ եւ միւս քառորդն ալ ստակ հաւաքելու մէջ:

Շատ բաներ գրուած եւ գրուցուած են այս անձին վրայ: Լրագիրները հրատարակած են երբեմն, որ իր փոքրատրոններէն մին, ընդհանուր սովորութեան համեմատ, շրջագգեստ հագնելու տեղ սխալմամբ բանթալոն կը հագնէր: Շատերը պոռագին այն ատեն՝ թէ այդ փոքրատրոն իգական սեռէ էր, բայց ինքը հերքեց այդ գրպարտութիւնն սա փաստելով, թէ հագուստը յօդ մ'է. բանթալոնը արական գոյականներու վրայ կը դրուի, իսկ շրջագգեստն իգականներու վրայ. ուստի քանի որ իր փոքրատրոն բանթալոն կը հագնի, քերականութեան կանոնին համեմատ արական է եւ ո՛չ իգական, սակայն խմբագիրներն, որ քերականութիւնը շատ չեն յարգեր, այս բացատրութիւնը գոհացուցիչ չգտան:

Հրաշագործն գիտնական մ'է, սակայն շատ խնդիրներու մէջ կը տարբերի դարուս միւս գիտուններէն: Օդը չէ որ, կ'ըսէ, շրջապատած է մեր բնակած երկրագունդն, այլ խաբէութիւնն, որ՝

Անօտր է, վասն զի հաշիւներու ամենափոքր մասերու մէջ կրնայ մնալ:

Տարածական է, վասն զի պարագաներու համեմատ իր նախկին ծաւալէն ատելի մեծ ծաւալ կրնայ ունենալ:

Թափանցիկ է, վասն զի շատ մը կրօնատրոներ անոր մէջէն կ'անցնին:

Առաձգական է, վասն զի կրնայ ճնշուիլ պատրիարքարանէն, բայց նորէն իր առաջին ծաւալը կ'առնէ: Գիտնականութեան շնորհիւն է, որ մինչեւ այսօր այնչափ պաշտօն վարեց, եւ մօտերս Պաղդադու առաջնորդ պիտի անուանուի

այնտեղի ազգայիններն առաջ տանելու համար:

Ունանք կ'ուզեն հաւատացնել թէ հրաշագործն, որուն ճակատէն վաթսունհինգ շնիկ աստղ անցած է, ազգն ա'յնչափ տարիներ զբաղեցնելու վրայ շատ զղջացած է եւ թէ որոշած է փորձանք ըլլալ այն ամէն անձերու, որոնք ազգին շահն ոտնակոխ ընել կ'ուզեն:

Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանեան միջին հասակով, թուխ դէմքով եւ փոքր աչերով մարդ մ'է: Փողոցը գնացած ժամանակն այնպիսի ուշադրութեամբ կը նայի մարդու երես, որ կը ստիպուիս ձեռքդ բաճկոնիդ տանելու՝ նայելու համար թէ ժամացոյցդ քո՞վդ է:

Եթէ իւր դէմքն կարելի ըլլայ կենդանի գոյներով նկարել՝ մեր առջեւը կ'ունենանք պատկեր մը, որ կարծես մեզի կ'ըսէ. կը բարեհաճի՞ք ձեր քսակն անուշութեամբ ինձ տալու, որպէսզի ձեզի քահանայ ձեռնադրեմ:

Իւր ամէնէն նշանաւոր կարծիքներէն մին է բոլոր աշխարհականները կրօնաւոր ընել: Այս եղանակով, կ'ըսէ, աշխարհականները հոգեւորապէս մխիթարուելու համար քահանաներու դիմելու հարկ չեն ունենար եւ իրենք զիրենք կը մխիթարեն: Այս համոզմամբ է, որ չորս հազարէն աւելի քահանայ ձեռնադրած է: